ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИИ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
ОБЩИНА ГАЙ

« 03 » ապրիլի 2013 թ.
թիվ 40

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավարի 2013 թվականի մարտ ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունը:

Առդիր 5 թերթ:

Գայի գյուղական համայնքի ղեկավար Ս. Մարկոսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 3081-13
03 04 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 19» մարտի 2013 թվականի

Որոշում N 10

ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետով և Գայ համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 2 նիստի N 10-Ն որոշման 2-րդ կետով.

Որոշում եմ՝

1. Արամավիրի մարզի Գայ համայնքի 2012 թվականի բյուջեի 01/ 1 /1-ի 4239 հոդվածից
   1) 200.0 հազ. դրամ տեղափոխել 4214 հոդվածին
   2) 100.0 հազ. դրամ տեղափոխել 4232 հոդվածին:
2. Սույն որուշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար Ս. Մարկոսյան

2013 թվական
ապրիլի 03-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ «01» մարտի 2013թ.-ի

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի 168-Ն որոշմամբ.

Կարգադրում եմ՝

1. Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի գյուղապետարանի գնումների համակարգողի պարտականությունները դնել համայնքի ղեկավարի օգնական Անահիտ Տերտերյանի վրա:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2013 թվական
ապրիլի 03-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 18» մարտի 2013 թվականի

Որոշում N 9

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով և հաշվի առնելով, որ բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և հիմք ընդունելով Գայ համայնքի բնակիչ Ալբերտ Սուրիկի Դանիելյանի 2013 թվականի (ծնված 30.11.1959թ.) մարտի 11-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արամավիրի մարզի Գայի գյուղական համայնքի Խաչատրյան 2-րդ փողոց 6 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի՝ Ալբերտ Սուրիկի Դանիելյանի (ծնված 30.11.1959թ.) գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրիանական 0.12 հա հողամասի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների և օրինական հաղամասին կից 74.0 քմ ինքնակամ զբաղեցրած հառամասի նկատմամբ իրավունքները:
2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:
3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Ալբերտ Սուրիկի Դանիելյանի (ծնված 30.11.1959թ.) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված օրինական հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տների շենք-շինությունների նկատմամբ, տրամադրելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար Ս. Մարկոսյան

2013 թվական
ապրիլի 03-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 13» մարտի 2013 թվականի

Որոշում N 8

ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թվականի հունիսի 10-ի Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և հաշվի առնելով որ հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետին և հաշվի առնելով Արամավիրի մարզի Գայի գյուղական համայնքի բնակչուհի Գայանե Հակոբյանի, Օֆիկ Դանիելյանի, Վազգեն, Հրաչյա և Օֆելյա Դանիելյանների 2013 թվականի փետրվարի 15-ի դիմումը:

Որոշում եմ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արամավիրի մարզի Գայ գյուղական համայնքի Գարնանային 1 փողոց, թիվ 26 հասցեում գտնվող Գայանե Հակոբյանին (ծնվ. 16.09.1964թ.), Օֆիկ Դանիելյանին (ծնվ. 01.01.1938թ.), Վազգեն Դանիելյանին (ծնվ. 01.02.1987թ.), Հրաչյա Դանիելյանին (ծնվ. 03.11.1988թ.) և Օֆելյա Դանիելյանին (ծնվ. 06.11.1995թ.) սեփականության իրավունքով պատկանող 1200քմ օրինական տնամերձ հողամասի և կից ավել զբաղեցրած 144 քմ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային բաժնում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար Ս.Մարկոսյան

2013 թվական ապրիլի 03-ին
գ. Գայ